Հավելված N 1
ՀՀ կառավարության 2008 թվականի
դեկտեմբերի 25-ի N - Ն որոշման

Ս Կ Զ Բ Ո Ւ Ն Ք Ն Ե Ր Ե Վ Չ Ա Փ Ա Ն Ի Շ Ն Ե Ր

ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ

1. Գիտական կենտրոնների ձևավորման սույն սկզբունքները և չափանիշները մշակվել են՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի բարեփոխումների հայեցակարգային դրույթները։

2. Գիտական կենտրոնների ստեղծման նպատակն է գիտական կազմակերպությունների կողմից իրականացվող հիմնարար, կիրառական հետազոտությունների ու մշակումների արդյունավետության բարձրացումը, գիտության, կրթության և արտադրության ինտեգրումը։

3. Գիտական կենտրոնների ձևավորման սկզբունքներն են՝

1) գիտական կազմակերպությունների գիտական հետաքրքրությունների ընդհանրությունը.

2) գիտական ներուժի, նյութատեխնիկական բազայի և տարածքների համատեղ օգտագործումը.

3) գիտական ներուժի և վարչասպասարկող անձնակազմի օպտիմալացումը.

4) գիտական ներուժի արդյունավետ, նպատակային վերարտադրությունը.

5) կառավարման համակարգում ժամանակակից մենեջմենթի ներդրումը.

6) ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացումը։

4. Գիտական կենտրոնների ձևավորման չափանիշներն են՝

1) համապատասխան նյութատեխնիկական բազայի և տարածքների,

2) բարձր որակավորում ունեցող գիտական աշխատողների և մասնագետների՝ համալիր ուսումնասիրություն կատարելու կարողության,

3) միջազգային համագործակցության փորձի,

4) մտավոր սեփականության օբյեկտների,

5) գիտական արդյունքների ներդրման փորձի առկայությունը։

5. Նշված չափանիշները կողմնորոշիչ են գիտական կենտրոնների ձևավորման գործընթացում։

6. Գիտական կենտրոն կարող են ձևավորել Հայաստանի Հանրապետության մեկ կամ մի քանի գիտական կազմակերպություններ, բարձրագույն ուսումնական հաստատություններ, գիտաարտադրական միավորումներ և գիտական, գիտատեխնիկական, գիտակրթական գործունեություն իրականացնող այլ կազմակերպություններ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2008 թվականի
դեկտեմբերի 25-ի N - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետությունում գիտական կենտրոններ ձևավորելու կարգը:

2. Գիտական կենտրոններ ձևավորելու գործընթացը համակարգելու նպատակով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն (այսուհետ՝ կոմիտե) ստեղծում է գիտության պետական կոմիտեի նախագահի նախագահությամբ և Հայաստանի Հանրապետության համապատասխան նախարարությունների ու Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ներկայացուցիչներից կազմված հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով):

3. Կոմիտեն հրապարակում է գիտական կենտրոնի ձևավորման հայտի ձևը (այսուհետ՝ հայտ):

4. Հայտը կոմիտե է ներկայացվում Հայաստանի Հանրապետության նախարարությունների, գերատեսչությունների, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի, ինչպես նաև բուհերի, գիտաարտադրական միավորումների և գիտական, գիտատեխնիկական, գիտակրթական գործունեություն իրականացնող այլ կազմակերպությունների կողմից:

5. Հիմք ընդունելով գիտական կենտրոնի ձևավորման սկզբունքները և չափանիշները՝ հանձնաժողովը յուրաքանչյուր եռամյակը մեկ անգամ քննարկում է հայտը և տալիս գիտական կենտրոն ձևավորելու նպատակահարմարության վերաբերյալ եզրակացություն:

6. Հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա կոմիտեն գիտական կենտրոն ձևավորելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը սահմանված կարգով ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարություն։

7. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից գիտական կենտրոնի ֆինանսավորումը կատարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեով գիտության ծախսերի համար նախատեսված ընդհանուր հատկացումների սահմաններում։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ